# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 680-Ա

17 նոյեմբերի 2025 թ.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԻՆԱՐԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՍՏՂԻԿ ԲԱԴՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջն ու Քրիստինե Սահակյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Սահակյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ից 2024 թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Սահակյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և

պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինարի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Աստղիկ Բաղոյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

17.11.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840505

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
**ք. Գավառ**